

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2016 թվականի փետրվարի 19-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հաշվետվություն:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման վերաբերյալ /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ ֆակուլտետում քննաշրջանի ավարտից հետո գրանցվել է առաջադիմության բարձրացում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ուսման վարձավճարը չվճարելու հանգամանքով պայմանավորված՝ քննաշրջանին չմասնակցող ուսանողների թիվը նվազել է:

Որոշեցին – Հետևողական աշխատանքներ կատարել ֆակուլտետում գրանցված 88% ընդհանուր բացարձակ առաջադիմությունը պահպանելու ուղղությամբ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի հաշվետվության վերաբերյալ /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց 2015-2016 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ֆակուլտետում իրականացվող կրթական ծրագրերում կատարված՝ ուսումնական և արտադրական պրակտիկաների ժամկետների և տևողությունների փոփոխությունների մասին: Ներկայացվեց նաև ֆակուլտետում ուսումնական գործընթացի համառոտ հաշվետվություն:

Որոշեցին – Պրակտիկաների պատշաճ անցկացման նպատակով համագործակցել համապատասխան կազմակերպությունների հետ, այդ գործընթացում ներգրավել նոր գործընկեր կառույցներ, որտեղ և հնարավոր կլինի անցկացնել արտադրական պրակտիկաները:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի մեկնարկի վերաբերյալ /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ ուսումնական գործընթացն ընթանում է նախատեսված ծրագրին համապատասխան: Դեղագործական քիմիա բաժնի 3-րդ կուրսում «Դեղատնային գործի կազմակերպում» դասընթացի վարման համար հրավիրվել է դասախոս՝ Ռ. Գալոյան:

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի նախագահ՝ Մ. Պ. Ավագյան

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝ Մ. Ն. Հովհաննիսյան